ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

**«ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ 554-Ն ՈՐՈՇՄԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 554-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով լրացուցիչ նյութերի ուսումնասիրման անհրաժեշտությունից ելնելով, ինչպես նաև գործի հանգամանքների համակողմանի քննության կազմակերպման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

1. Գործի դատաքննության օրը նախկինում նշանակված՝ 2013 թվականի փետրվարի 12-ի ժամը 10.00-ից փոխադրել 2013 թվականի փետրվարի 22-ի ժամը 10.00։
2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով՝ գործի դատաքննությունը կազմակերպել բանավոր ընթացակարգով։
3. Այս կապակցությամբ վերանայել ՀՀ սահմանադրական դատարանի 23.10.2012թ. ՍԴԱՈ-71 աշխատակարգային որոշումը՝ ուժը կորցրած ճանաչել որոշման 2-րդ և 4-րդ կետերը։
4. Սույն գործով ՀՀ սահմանադրական դատարանի նիստին հրավիրել Երևանի պետական համալսարանի ռեկտոր, Պետական բուհերի ռեկտորների խորհրդի նախագահ Ա. Սիմոնյանին՝ քննության առարկա գործով որոշ պարզաբանումներ տալու անհրաժեշտությունից ելնելով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

6 փետրվարի 2013 թվականի
ՍԴԱՈ-9